# Ս. ՆԱՋԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Մոսկուա. 28 ապրիլի 1872.

Իմ ազնիւ բարեկամ

Յովհաննէս Միրզաբէգեանց. [1])

Ես մինչև այժմ մնացած եմ Ձեզ պարտական 4 ման. արծաթ. ինչպէս գրեցի Ձեզ Թիֆլիզից, ուղարկելով Ձեզ Ձեր հայկական հասարակաց մատենադարանի համար հոգացած գրեանքը և դոցա հաշիւը։ Թիֆլիզում գլուխս գրեթէ միշտ խառն լինելով, ես չկարողացայ հասուցանել Ձեզ վերոյիշեալ արծաթը և տեղափոխուելով դէպի Մոսկուա, մինչև այսօր, նորանոր հոգսերի և տառապանքի մէջ, ոչ թէ կարողացայ մոռանալ իմ պարտքս-այդ ինձ անկարելի է այլ միայն անձեռնհաս դտայ։ կիսով չափ և մի աննշերելի ծուլութեամբ օրէցօր ձգելով լեցուցանել իմ պարտքը, թէ մեծ և թէ փոքրիկ, այնուամենայնիւ բաւական ծանր ծանրանալով իմ խղճիս վերայ։ Ահա ստանում էք ինձանից Ձեր հասարակաց արծաթը 4 մանէթ, ծրարած այս նամակիս մէջ և ես ազատվում եմ մի երկար մտատանջութիւնից, ճոխանալով մի խաղաղութեամբ հոգու, որից զուրկ էի։

Այժմ Մոսկուայումն եմ, ինչպէս տեսնում էք դուք իմ նամակից, ճաշակեցինք և Կովկասը և Թիֆլիզը և նորա մէջ մեր պատուելի Հայերը. փորձը, որ առանց մեծամեծ զրկանքի չանցաւ, ցոյց տուեց, որ բաւական չէ մի լոկ հայրենասիրութիւն, վասն օգտելու իւր հայրենակիցներին, այլ անպատճառ պիտոյ է և սոցա կողմից կարողութիւն օգուտ քաղելու և ստանալու իւրեանց ուսումնական հայրենակցից։ Մենք չտեսանք այդ բանը Թիֆլիզեան հայերի մէջ, և այդպէս մեր կեանքը Թիֆլիզի մէջ անօգուտ լինելով և անխորհուրդ, յանձն

---

[1]) Այժմ Խորէն ա. քահ. Բագուի։ Ծ. Խ.

առանք մի պատուելի հրաւէրք տեղափոխուելու դէպի Մոսկուա և անցեալ Թուականի յուլիսի 14 հրաժարուեցանք մեր Թիֆլիզեան բարեկամներից, ոչ առանց գեղեցիկ լիշատակների, որ դոքա վերջին օրերումը տուեցին ինձ սիրով ու սեղանով։

Խնդրեմ ընդունել իմ առ 'ի սրտէ ցաւակցութիւնը թէ Ձեզ և թէ մեր բոլոր հայրենակից եղբարցը վասն տէր տխուր պատահարին, որ այնքան աւեր և կործանութիւն բերած է Շամախեցւոց վերայ։ Լսում եմ, որ դոքա, որպէս և դուք արդէն տեղափոխուած էք դէպի Բաքու. որչափ զրկանք և տառապանք պիտի հասանին աղքատներին և չքաւորներին մանաւանդ։ Ես իմ երկու անգամ քաղաքից քաղաք, ընտանիքով և բազմահատոր մատենադարանով տեղափոխութեամբ նաւաբեկուածս կարող եմ շատ լաւ նկարագրել մտքով թէ ինչ ասել է մի այդպիսի փոխադրութիւն. բայց իմս անհամեմատ է Ձերին. 2000 վերստ և 200 վերստ դէմ յանդիման կանգնած են միմեանց. զանազան են միայն կարողութիւնքը. ես կորուսի 3000 մանէթ. բաց ի բարոյական անփոխարինելի վնասներից, որոց ճառագրութիւնը չունի ոչինչ գրաւիչ զօրութիւն։

Խնդրեմ երբեմն գրել առիս Բաքուից, եթէ հաճոյ է Ձեզ, հաւատացած լինելով, որ Ձեր բարեկամական հաղորդակցութիւնքը միշտ քաղցր կը լինին ինձ։ Ողջունեցէք ինձանից ջերմութեամբ պ. կապիտան Զոհրաբեանը։

Մաղթելով Ձեզ և մեր ցաւած հայրենակիցներին Աստուածուստ ամենայն թեթևութիւն և բարեյաջողութիւն՝ Ձեր և նոցա նորոգ վիճակի մէջ։

Հնամ

իմ աղնիւ բարեկամ

Ձեր պատրաստական բարեկամ

Ս. Նազարեանց։